



Միքայել Նալբանդյան

Մանկության Օրեր

Մանկությա՛ն օրեր, երազի նման
Անցաք գնացիք, այլ չեք դառնալու .
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր .
Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից հետո եկավ գիտություն
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա,
Ամեն բան ընկավ մտածության տակ,
Բոպե չմնաց ազատ կամ ունայն:

Գիտակցությունը հաջորդեց սորան .
Ազգի վիճակը ծանրացավ սրտիս . . .
Ապուլուն տվեց ինձ յուր քնարը .
Որպես փարատիչ տրտում ցավերիս:

Ավա՛ղ . այդ քնարը իմ ձեռքում հնչեց
Նույնպես լալագին, նույնպես վշտահար,
Ինչպես իմ սիրտն էր, իմ զգացմունքը .
Ուրախացուցիչ չգտա մի լար:

Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցավերից ազատվելու չեմ,
Որչափ իմ ազգս կը մնա ստրուկ

Օտարների ձեռք, անխոս, տխրադեմ:

Մանկությա՛ն օրեր, ինչո՛ւ այդպես շուտ
Թոաք գնացիք, անդարձ հավիտյան .
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ
Կարծում էի ինձ աշխարհի իշխան:

Գերության շղթան ինձ գգալի չէր,
Եվ ոչ բռնության անգութ ճանկերը .
Ձեզանից հետո ծանրացան նորա,
Ո՛հ, անիծում եմ ես այս օրերը:

Լո՛ւտ կաց, դու քնար, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապուլուն, հե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Չոհ բերել կյանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դեպ հրապարակ
Առանց քնարի, անգարդ խոսքերով .
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին .
Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Թո՛ղ պատգամախոսը, հնացած Դեյվի,
Յուր եռոտանու վերա փրփրի .
Թո՛ղ միջին դարու գաղափարներով
Ամբոխը խաբել ճգնի աշխատի:

Թո՛ղ նա թարգմանե գրպարտությունը,

Թո՛ղ մխիթարվի ծովի ափերում,
Մենք ազատության ենք միայն թարգման,
Միայն այս խոսքս ունինք բերանում:

«Ո՛վ հայր, ո՛վ դու հայր, որ երկնքումն ես,
Խնայիր թշվառ մեր անտեր ազգին .
Մի՛ տար գոհ գնալ թշնամիների» .
Նա այլ չէ լսում դեմոկրատիայի հարցուկին: